ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Դաուգավպիլս քաղաքի (Լատվիայի Հանրապետություն) և Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) միջև

Հաշվի առնելով Էջմիածին քաղաքի (Հայաստանի Հանրապետություն) և Դաուգավպիլս քաղաքի (Լատվիայի Հանրապետություն) միջև փոխշահավետ բարեկամական կապեր զարգացնելու ձգտումը, երկու քաղաքների միջև բարեկամական հարաբերությունները ամրապնդելու նպատակով, Էջմիածին քաղաքը (Հայաստանի Հանրապետություն) և Դաուգավպիլս քաղաքը (Լատվիայի Հանրապետություն) (այսուհետ՝ Կողմեր) կնքում են սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը նպատակ ունեն համագործակցել հետևյալ բնագավառներում՝ մշակույթ, կրթություն և գիտություն, առողջապահություն և սոցիալական ապահովություն, տեղական կառավարում, էկոլոգիա, էկոնոմիկա և ներդրումային գործունեություն, քաղաքային տնտեսություն, սպորտ, զբոսաշրջություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ:
2. Աջակցել և օժանդակություն ցուցաբերել քաղաքային հաստատությունների, կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ձեռնարկությունների և մասնագետների միջև գործունեության տարբեր ոլորտներում ուղիղ կապերի հաստատմանը:
3. Համագործակցության ծրագրեր համաձայնեցնել և հաստատել ամեն տարի կանոնավոր կերպով նամակներ փոխանակելու միջոցով, որից կբխի հետագա պայմանագրերի կնքումը:
4. Փորձի փոխանակման և երկու քաղաքների միջև հետագա համագործակցություն նպատակով իրականացնել քաղաքների պատվիրակությունների փոխայցեր:
5. Իրականացնել Կողմերի բնակիչների կյանքի և տեղական ինքնակառավարման մարմինների (քաղաքապետարանների) գործունեության մասին տեղեկատվության փոխանակում:
6. Աջակցել և զարգացնել փոխշահավետ գործնական, առևտրային հարաբերություններ, նպաստել գործարար անձանց պատվիրակությունների փոխայցերին և համատեղ փոխշահավետ տնտեսական կապերի իրականացմանը:
7. Կողմերը կանցկացնեն սույն հուշագրի կատարման մոնիտորինգ՝ փոխադարձ նամակագրության կամ անձնական հանդիպումների միջոցով:
8. Սույն հուշագիրը հիմք է հանդիսանում հետագայում համապատասխան պայմանագիր կնքելու համար: Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Հուշագրի տեքստի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել կողմերի գրավոր համաձայնությամբ մինչև պայմանագրի կնքումը: Յուրաքանչյուր կողմը իրավունք ունի դադարեցնել հուշագիրը՝ մյուս կողմին առնվազն վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելու միջոցով:

Հուշագիրը կազմված է երեք բնօրինակից՝ լատիշերենով, հայերենով և անգլերենով: Բոլոր տեքստերն էլ հավասարազոր են. տարաձայնությունների դեպքում գերիշխող է համարվում անգլերեն տեքստը:

Ստորագրված է Դաուգավպիլս քաղաքում 2017թ. նոյեմբերի 17-ին:

Դաուգավպիլս քաղաքի կողմից՝	**Էջմիածին քաղաքի կողմից՝**
Դաուգավպիլսի քաղաքային խորհրդի նախագահ Ռիհարդս Էյգիմս	Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյան